ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի
մայիսի 25-ին

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը և կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է *Արցախի*[*18)] Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի, *կենցաղային և սահմանափակման ենթակա*[*16)] ծառայությունների (այսուհետ՝ առևտրի և ծառայությունների) ոլորտի պետական կառավարման հիմքերը, այդ ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները՝ ուղղված առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

2. *Արցախի*[*18)] Հանրապետության տարածքում իրականացվող առևտրի և ծառայությունների գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, [*18)] *Քաղաքացիական*[*19)] օրենսգրքով, *Արցախի*[*18)] Հանրապետության այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավական այլ ակտերով, ինչպես նաև *Արցախի*[*18)] Հանրապետության միջազգային պայմանագրերով:

3. Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով իրականացվող առևտրի և (կամ) մատուցվող ծառայությունների հետ կապված հարցերը կարգավորվում են սույն օրենքի 4.1-ին գլխով: Սույն օրենքի 4.1-ին գլխի կանոնները կիրառելի են հեռուստատեսային առևտրի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, կամ եթե նշված կանոնների կիրառումը չի հակասում դրա էությանը:[*16)]

Գ Լ Ո Ւ Խ 2

ԱՌԵՎՏՈՒՐ

Հոդված 2. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով առևտրի ոլորտում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

վաճառող՝ առուվաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

(ուժը կորցրած է ճանաչվել 17.09.08թ. ՀՕ-53-Ն օրենքով) [*2)]

առևտրի օբյեկտ՝ գույքային համալիր (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է ապրանքների առուվաճառքի համար.

սպառողական ապրանքների շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների առուվաճառք.

ոչ պարենային ապրանքներ՝ բնակչության նյութական և կուլտուր-կենցաղային պահանջների բավարարման նպատակով վաճառքի համար նախատեսված կուլտուր-կենցաղային և տնտեսական նշանակության, թեթև արդյունաբերության և այլ արտադրանք.

արտադրատեխնիկական նշանակության ապրանքներ՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից օգտագործման նպատակով նախատեսված ապրանքներ, որոնք հիմնականում ներկայացվում են տեխնոլոգիական սարքավորումների, մեքենաների, վառելիքահումքային ապրանքների տեսքով.

գյուղատնտեսական արտադրանքի շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանական ծագում ունեցող մթերքի, բույսերի, բուսական արտադրանքի (այսուհետ՝ գյուղատնտեսական արտադրանք) և սննդամթերքի առուվաճառք.

կենդանիների շուկա՝ առևտրի իրականացման վայր, որտեղ իրականացվում է կենդանի կենդանիների առուվաճառք.

շրջիկ առևտրի կետեր՝ ապրանքների պահման և մանրածախ առևտրի համար համապատասխան սարքավորումներով ապահովված ավտոկրպակներ, մոտոկրպակներ, ավտոսայլակներ, մոտոսայլակներ, ավտոցիստեռններ և այլն.

հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետ՝ *օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայան.*[*2), *6),*7)]

շրջիկ առևտուր՝ *առևտրի օբյեկտներից դուրս շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառք.*

շրջածախ առևտուր՝ *առևտրի օբյեկտներից դուրս, վաճառողի հանձնարարությամբ, աշխատողի կողմից սպառողի տանը, հիմնարկներում, կազմակերպություններում, տրանսպորտում կամ փողոցում գնորդի հետ անմիջական շփմամբ իրականացվող մանրածախ առևտուր.*

բացօթյա առևտուր՝ *առևտրի օբյեկտներից, այդ թվում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի*[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերից և առևտրի իրականացման վայրերից դուրս՝ օրենսդրությամբ թույլատրված ապրանքների առևտուր.*

դիլեր՝ *կազմակերպության արտադրանքի իրացման ցանցի մեջ մտնող և նրա գործակալը հանդիսացող՝ արտադրանքի մանրածախ առևտրով զբաղվող վաճառող.*

դիստրիբյուտոր՝ *արտադրական կազմակերպություններին շուկայում ներկայացնող վաճառող, որն արտադրական կազակերպությունների հետ կնքված մատակարարման պայմանագրով մեծածախ ծեռքբերումների հիման վրա իրականացնում է իրացման գործունեություն.* [*2)]

առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ՝ *սույն օրենքով սահմանված դեպքերում համապատասխան լիցենզիայի հիման վրա*[*3)] առևտրի իրականացման վայրի աշխատանքը կազմակերպող, սույն օրենքով սահմանված պարտավորություններ կամ իրավունքներ ունեցող իրավաբանական անձ, կամ անհատ ձեռնարկատեր.

առևտրի կենտրոն՝ *առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող և կառավարվող՝ մեկ ամբողջական շենքում կամ իրար հետ մշտական (ստացիոնար) անցուղիներով կապված շենքային համալիրում տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համախումբ, որտեղ նախատեսված են նաև այլ ծառայությունների համար տարածքներ.*[*7)]

ցուցահանդես-վաճառք՝ իրավաբանական անձի և (կամ) անհատ ձեռնարկատիրոջ կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալված տարածքում կամ իրավասու մարմնի կողմից սահմանված վայրում առուվաճառքի պայմանագրերի կնքման և տարածաշրջանային, միջտարածաշրջանային և միջպետական տնտեսական կապերի ձևավորման նպատակով կազմակերպվող միջոցառում.

տոնավաճառ (վերնիսաժ)՝ հատկացված վայրում շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին կազմակերպվող շուկայական միջոցառում, որտեղ առուվաճառքն իրականացնում են իրավաբանական և ֆիզիկական անձինք.

առևտրի իրականացման վայր՝ *առևտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող և կառավարվող՝ առանձնացված, կառուցապատված և կահավորված, երկու և ավելի վաճառատեղ ունեցող տարածք, որտեղ կարող են նախատեսվել նաև հանրային սննդի և այլ ծառայությունների համար տարածքներ.*[*7)]

առևտրի իրականացման վայրի վաճառատեղ՝ *առուվաճառքի պայմանագրով գործարքներ կատարելու համար օգտագործվող տեղ.*

խանութ՝ *առևտրական գործունեության իրականացման համար նախատեսված՝ հատուկ սարքավորված շենք, շինություն կամ դրա մաս, որն ունի առևտրական դահլիճ.*

կրպակ՝ *առևտրական գործունեության իրականացման համար նախատեսված շինություն, որը չունի առևտրական դահլիճ.*

վաճառատեղ (վաճառասեղան)՝ *սույն օրենքի իմաստով առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնելու համար մեկ և ավելի վաճառողներին օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված գույք (սեղան).*

դրոշմապիտակ՝ *սահմանված չափեր, ձև և կեղծումից պաշտպանվածության աստիճան ունեցող ինքնատոնձվող դրոշմանիշ, որի վրա նշված* [*18)] *սերիան և հերթական համարը հնարավորություն են տալիս նույնականացնել դրանով դրոշմավորված ապրանք արտադրողին կամ ներմուծողին:*

Հոդված 3. Առևտրի օբյեկտների և սռևտրի իրականացման վայրի տեսակները

1. Առևտրի օբյեկտների տեսակներն են՝ խանութները, կրպակները, տաղավարները, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերը:[*2), *6),*7)]

2. Առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Հոդված 3.1. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզավորումը

*1. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման տեսակներից առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների (սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում) կազմակերպումը ենթակա է լիցենզավորման «Լիցենզավորման մասին» [*18)] օրենքով սահմանված կարգով՝ սույն օրենքին և լիցենզավորման կարգին համապատասխան:*

*2. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների կազմակերպումը ենթակա է լիցենզավորման, եթե շուկաների տարածքում իրականացվում է սննդամթերքի վաճառք և գործում են առևտրի օբյեկտներ: Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն տարածվում «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» [*18)] օրենքով սահմանված կարգով զերակա հանրային շահերով օտարվող տարածքներում, ինչպես նաև Արցախի[*18)] Հանրապետության բնակավայրերի սահմանագծերից դուրս, բացառապես շարժական բաց վաճառատեղերի (վաճառասեղանների) միջոցով առևտրի իրականացման վայրի կազմակերպման դեպքերի վրա:*

3. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպչի կողմից սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով կնքվող վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) տրամադրման պայմանագրերը պետք է ներառեն հետևյալ պարտադիր պայմանները՝

ա) առևտրի իրականացման վայրի կազմակերպչի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, նրանց պետական գրանցման համարը և ամսաթիվը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

բ) առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, նրանց պետական գրանցման համարը և ամսաթիվը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

գ) առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեության իրականացման ժամանակահատվածը (ոչ ամբողջ ամսվա համար՝ նշելով օրերը և դրանց թիվը).

դ) վաճառատեղի հերթական համարը և հատկացվող տարածքի մակերեսը ($մ^2$).

ե) մեկ քառակուսի մետրի հաշվով գանձվող վճարի չափը.

զ) պայմանագրի կնքման և գործողության ժամկետները:

4. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպչի կողմից կնքվող վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) տրամադրման պայմանագրերը գործողության մեջ են մտնում պայմանագիր կնքած իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից օգտագործման (շահագործման) համար նախատեսվող հսկիչ-դրամարկղային մեքենայի՝ սահմանված կարգով հարկային մարմնում գրանցման քարտի պատճենը կազմակերպչին ներկայացնելու օրվանից: Օգտագործվող հսկիչ-դրամարկղային մեքենան նորով փոխարինելու դեպքում նախկինում գրանցված հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցումից հանելու օրվանից մինչև նոր հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կազմակերպչին ներկայացնելու օրը վաճառատեղում (այդ թվում՝ առևտրի օբյեկտում) առուվաճառք իրականացնելն արգելվում է:

*Սույն մասի պահանջները չեն տարածվում առևտրի իրականացման վայրերում բացառապես գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի համար նախատեսված բաց վաճառասեղանների միջոցով առևտրի իրականացման վրա, ինչպես նաև առևտրային այլ գործունեություն իրականացնողների վրա,[*7)] որոնց մասով օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը:*

*5. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպիչը յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ Արցախի[*18)] Հանրապետության կառավարության սահմանած ձևով լիցենզավորող մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ տվյալ եռամսյակի ընթացքում առևտրի իրականացման վայրի տրամադրած վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ, որը պետք է պարունակի սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված պարտադիր պայմանների վերաբերյալ տեղեկությունները:*

*6. Արցախի[*18)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիցենզավորող մարմինը հաշվետվության պատճենը ներկայացնում է Արցախի[*18)] Հանրապետության հարկային մարմին, որը լիցենզավորող մարմին է ներկայացնում տեղեկանք հաշվետվությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի՝ հարկ վճարողի հաշվառման համարների և հարկային մարմնում հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հաշվետվությունում տեղ գտած անհամապատասխանությունների մասին:*

7. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպիչն իր հաշվին, սույն օրենքով սահմանված ժամկետներից սկսած, լիցենզավորման ենթակա առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» [*18)] *օրենքի համաձայն կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով Արցախի*[*18)] *Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներդնում ու շահագործում է համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարան, ապահովում է յուրաքանչյուր վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) և հարկային մարմնի համար տեղեկատվական տվյալների շտեմարանին միանալու հնարավորությունը և տեղեկատվական միասնական համակարգի անխափան աշխատանքը:*

8. Առևտրի իրականացման վայրի վաճառատեղերում (այդ թվում՝ առևտրի օբյեկտներում) սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ կնքված պայմանագրերով կամ սույն հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերության պահանջների խախտմամբ առուվաճառքի փաստացի իրականացման կամ սույն հոդվածի 7-րդ մասի պահանջների խախտման դեպքում (այդ թվում՝ հարկային մարմնի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա) լիցենզավորող մարմնի կողմից լիցենզիայի գործողության կասեցումը և (կամ) դադարեցումը իրականացվում են «Լիցենզավորման մասին» [*18)] *օրենքով սահմանված կարգով:*[*3)]

Հոդված 4. Առևտրի օբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Առևտրի օբյեկտներում առուվաճառքն իրականացնում են միայն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

2. Առևտրի օբյեկտներում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի՝ առանձին բաժիններում:

3. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի սույն օրենքով ապրանքների վաճառքը կազմակերպելու համար օրենսդրությանը համապատասխան ընդունման, պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով և առևտրատեխնոլոգիական պարագաներով, պահեստային, վարչակենցաղային, ապրանքների վաճառքի նախապատրաստման համար անհրաժեշտ շենքերով:[*2)]

4. Առևտրի օբյեկտները պետք է ապահովված լինեն *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

5. Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների ցուցադրումն առևտրի օբյեկտից դուրս արգելվում է: Նշված ապրանքներ վաճառող առևտրի օբյեկտների ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

6. Ելնելով տվյալ առևտրի օբյեկտի առանձնահատկություններից՝ առևտրի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:[*2)]

7. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի*[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող ցուցանակով:*[*3)]

Հոդված 5. Առևտրի իրականացման վայրերին ներկայացվող պահանջները

1. Առևտրի իրականացման վայրերում առուվաճառքն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում):

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի վաճառք:

3. Առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը պետք է կատարվի ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում:

4. Առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաները պետք է ապահովված լինեն՝

ա) ձեռքի սայլակներով և մինչև ավտոկանգառ դրանց տեղաշարժն ապահովող ուղիներով.

բ) իրենց հատկացված հողատարածքի սահմաններում գործող ավտոկանգառով.

գ) օրենսդրությանը համապատասխան կառուցված կենցաղային հարմարություններով և սանիտարական հանգույցով, վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով: Առևտրի իրականացման վայրերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտակայքում տեղակայված վճարովի կամ անվճար հասարակական զուգարանների առկայության մասին տեղեկացնող, ինչպես նաև գտնվելու տեղի վերաբերյալ նշում պարունակող ցուցանակով.[*3)]

դ) տեսակը հաստատված և ստուգաչափված ստուգիչ չափման միջոցներով:[*3)]

4[1]. Բացի սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանների, կենդանիների շուկաները պետք է լինեն ցանկապատված, այցելուների և տրանսպորտային միջոցների համար նախատեսված առանձին մուտքերով, փոխադրամիջոցների անիվների ախտահանման համապատասխան հարմարություններով, կենդանիների բեռնման և բեռնաթափման հարթակով, իսկ 25 հազար և ավելի բնակչություն ունեցող բնակավայրերում տեղակայված շուկաները պետք է ունենան նաև տարբեր տեսակի և սեռահասակային խմբերի կենդանիների համար նախատեսված կացատեղեր՝ ճաղազատված տարածքներով, ցանցավոր հատակներով և ցուցատախտակով, որի վրա նշվում են կենդանու տեսակը, հասակը, սեռը, թույրը (գույնը) և գույքային համարը, ապահովված լինեն լվացող, ցողարկող և ախտահանող սարքերով, կերերի և ջրի մատակարարման հարմարություններով, կոյուղատար առվակներով կամ խողովակաշարերով և գոմաղբապահեստարաններով:[*3)]

5. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում արգելվում է ոչ պարենային ապրանքների վաճառքը (բացառությամբ վաճառքի համար անհրաժեշտ փաթեթավորման և տարայավորման ապրանքների):

Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում արգելվում է կենդանի կենդանիների վաճառքը:

6. Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների տարածքում գործող առևտրի օբյեկտների գործունեության վրա չեն տարածվում սույն հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Նշված առևտրի օբյեկտներում արգելվում է վաճառել սույն օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասում նշված ապրանքները:

7. Սպառողական ապրանքների շուկաներում արգելվում է գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը:

8. Սպառողական ապրանքների շուկաների տարածքում գործող առևտրի օբյեկտների գործունեության վրա չեն տարածվում սույն հոդվածի 7-րդ մասի պահանջները:

9. Առևտրի իրականացման վայրը պետք է ապահովված լինի *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

10. Առևտրի իրականացման վայրի կազմակերպման լիցենզիա ունեցող կազմակերպչի կողմից սույն օրենքի 3.1-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով ներդրված և շահագործվող համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանին (այդ թվում՝ յուրաքանչյուր վաճառատեղի հսկիչ-դրամարկղային մեքենաների տվյալներին) Արցախի[*18)] *Հանրապետության հարկային մարմնին հասանելիության կարգը սահմանում է Արցախի*[*18)] *Հանրապետության կառավարությունը:*[*3)]

Հոդված 5[1]. Բացօթյա առևտրին ներկայացվող պահանջները

1. Բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից[*16)] *թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:*

2. Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը:

3. Բացօթյա առևտուր իրականացնողները պետք է ապահովեն պայմաններ՝ վաճառվող ապրանքների ապրանքային տեսքը, անվտանգությունը և որակն ապահովելու համար:

Վաճառարկղերը պետք է դրվեն տակդիրների վրա, արգելվում է վաճառարկղերը դնել անմիջական գետնին, մայթին, սալահատակին:[*2)]

Հոդված 6. Վաճառողին ներկայացվող պահանջները

1. Վաճառողը պարտավոր է ապահովել՝

ա) սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-7-րդ մասերով, ինչպես նաև 5-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դրույթների պահանջների կատարումը.[*3)]

բ) յուրաքանչյուր աշխատողին՝ իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ *պետական հաշվառման*[*7)] համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը.

գ) սպառողի (գնորդի) հետ դրամական հաշվարկները հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով իրականացնելու դեպքում վաճառված ապրանքի հետ սպառողին (գնորդին) դրամարկղային չեկի, իսկ առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների իրականացնելու դեպքում՝ ապրանքի գնի վճարումը հաստատող, վաճառողի կողմից հաստատված ձևի, փաստաթղթի տրամադրումը.

դ) ապրանքը վաճառքի հանելուց առաջ առաջարկվող ապրանքի որակի ստուգումն ըստ արտաքին հատկանիշների.

ե) սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը:

2. Մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առևտուր) իրականացնելիս վաճառողը (մատակարարը) պարտավոր է իր կողմից բաց թողնված ապրանքի հետ գնորդին (պատվիրատուին) տրամադրել՝

ա) օրենքով սահմանված կարգով լրացված հաշվարկային փաստաթուղթ.

բ) օրենքով սահմանված դեպքերում՝ վաճառվող ապրանքների համապատասխանության հավաստագրեր:

3. Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման տվյալ վայրում վաճառողի (մատակարարի) կողմից մատակարարման պայմանագրով ապրանքների առուվաճառք (մեծածախ առևտուր) կատարելու դեպքում այդ մասին ցուցանակի վրա պետք է զետեղվի համապատասխան տեղեկատվություն:

Հոդված 6[1]. Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողին ներկայացվող պահանջները

Բացօթյա առևտուր իրականացնող վաճառողը պարտավոր է ապահովել՝

ա) սույն օրենքի 5[1]-րդ հոդվածի, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «դ» և «ե» կետերի պահանջների կատարումը.

*բ) ելնելով վաճառվող ապրանքների առանձնահատկություններից՝ սույն օրենքով վաճառքի թույլատրված ապրանքների համար օրենսդրությանը համապատասխան՝ պահման և վաճառքի պայմաններն ապահովող սարքավորումներով:[*2)]*

Հոդված 7. Առևտրի իրականացման վայրի կազմակերպչին ներկայացվող պահանջները

1. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել՝

ա) սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, *4[1]-րդ,[*3)]* 5-րդ, 7-րդ և 9-րդ մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը.

*բ) վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների)՝ օրենսդրությանը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ինչպես նաև տվյալ առևտրական գործունեությունն իրականացնելու համար նախատեսված այլ գույքով.[*2)]*

*գ) վաճառողներին (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի օբյեկտների վաճառողների)՝ տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով.[*2)]*

դ) առևտրի իրականացման վայրում սպառողների գնումների համար նախատեսված առևտրային տարածքներում (բացառությամբ առևտրի իրականացման վայրի տարածքում գործող առևտրի, հանրային սննդի, կենցաղային ծառայության օբյեկտների տարածքների)՝ սպառողներին հասանելի տեղերում տեսակը հաստատված և ստուգաչափված ստուգիչ չափման միջոցների առկայությունը.

*ե) սույն օրենքով սահմանված կարգով լիցենզավորման ենթակա առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերին հսկիչ-դրամարկղային մեքենաներով՝ իր հաշվին, ինչպես նաև «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» [*18)] օրենքի համաձայն՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների՝ հարկային մարմնում գրանցումը.*

*զ) սույն օրենքով սահմանված կարգով լիցենզավորման ենթակա առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» [*18)] օրենքին համապատասխան կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով Արցախի[*18)] Հանրապետության կառավարության սահմանած կարգով համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանի ներդրումը և շահագործումը՝ իր հաշվին:[*3)]*

2. Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպիչը վաճառքի ընդունվող՝ փորձաքննություն պահանջող գյուղատնտեսական արտադրանքի որակի ստուգման նպատակով ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի շուկայում համապատասխան սարքավորումներով հագեցված լաբորատորիա, *իսկ կենդանիների շուկաներում՝ անասնաբուժական ծառայության առկայությունը, որը վարում է գյուղատնտեսության ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված ձևի, կնքված ու համարակալված գրանցամատյան, և այն ենթակա է պարտադիր պահպանման առնվազն երեք տարի[*3)]*:

3. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը վաճառատեղերը վճարովի կամ անհատույց օգտագործման նպատակով տրամադրում է վաճառողներին՝ նրանց հետ օրենքով սահմանված կարգով կնքված *Արցախի*[*18)] *Հանրապետության կառավարության կողմից հաստատված տիպային պայմանագրի*[*3)] հիման վրա, բացառությամբ 5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև անմիջապես կազմակերպչի կողմից վաճառքն իրականացնելու դեպքերի:

Գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում ու տոնավաճառներում (վերնիսաժներում) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վաճառատեղերը տրամադրվում են նրանց անձնագրի հիման վրա:

Առանց պայմանագրերի կնքման *կամ սույն օրենքի 3.1-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ կնքված պայմանագրերով*[*3)], առևտրի իրականացման վայրերում, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությունում նախատեսված դեպքերի, առուվաճառք իրականացնելն արգելվում է:

Հոդված 8. Աշխատողին ներկայացվող պահանջները

1. *Անմիջականորեն վաճառք իրականացնող աշխատողը*[*2)] պարտավոր է՝

ա) վաճառքի հանելուց առաջ ստուգել ապրանքի որակն ըստ արտաքին հատկանիշների, դրանց պիտակների և գնապիտակների առկայությունը և գնորդին վաճառել օգտագործման նշանակությանը համապատասխանող ապրանք.

բ) իրազեկ լինել վաճառքում առկա ապրանքները բնութագրող հիմնական հատկություններին և անհրաժեշտության դեպքում սպառողին (գնորդին) տալ ստույգ և հավաստի տեղեկատվություն:

Հոդված 9. Առևտրի կազմակերպման կանոնները

1. Առևտրի օբյեկտներում առուվաճառքն իրականացվում է օրենքով սահմանված տեսակներով:

2. Մանրածախ առևտուրն իրականացվում է խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի[*6),*7)] *առևտրի կետերում, առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում), ցուցահանդես-վաճառքի կազմակերպման և բացօթյա առևտրի վայրերում, շրջիկ առևտրի կետերի, շրջածախ առևտրի, էլեկտրոնային կապի, դիլերների միջոցով և ավտոմատներով:*

3. Վաճառքի ցուցադրված յուրաքանչյուր ապրանքատեսակ պետք է ունենա գնապիտակ: Գնապիտակի վրա նշվում են ապրանքի անվանումը, մեկ միավորի գինը և գնապիտակի լրացման թվականը: [*2),*16)]

4. Սպառողական ապրանքների, գյուղատնտեսական արտադրանքի և կենդանիների շուկաներում, տոնավաճառներում (վերնիսաժներում) և ցուցահանդես-վաճառքի կազմակերպման վայրերում վաճառվող կամ վաճառքի ցուցադրվող ապրանքների համար գնապիտակի առկայությունը պարտադիր չէ (բացառությամբ նշված վայրերում գործող առևտրի օբյեկտների):

5. Գնված պատշաճ և ոչ պատշաճ որակի ապրանքների փոխարինումը կամ դրանց համար վճարված գումարի վերադարձումը և վերահաշվարկն իրականացվում են օրենքով սահմանված կարգով:

6. *(ուժը կորցրած է ճանաչվել 17.09.08թ. ՀՕ-53-Ն օրենքով)* [*2)]

7. [*16)] Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջդիր պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը (նետտո), մեկ կիլոգրամի և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, նաև պիտանիության ժամկետը:

8. Ցուցահանդես-վաճառքները կազմակերպվում և անցկացվում են իրավաբանական անձանց և (կամ) անհատ ձեռնարկատերերի կողմից:

Ցուցահանդես-վաճառքներում ապրանքների առուվաճառքն իրականացվում է նաև նմուշներով, կատալոգներով, ուրվանկարներով, տեղեկագրերով և էլեկտրոնային տեղեկատվության միջոցներով:

9. Տոնավաճառները (վերնիսաժները) կազմակերպում են տեղական ինքնակառավարման մարմինները, օրենսդրությամբ սահմանված կարգով, միայն շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:

10. Ապրանքների վաճառքը սպառողների (գնորդների) պատվերներով կարող է իրականացվել առևտրի օբյեկտներից:

Վաճառողը պարտավոր է սպառողներին (գնորդներին) ապահովել մատուցվող ծառայությունների ցանկի, պատվերների ընդունման և ապրանքների հանձնման ժամկետի, վաճառվող ապրանքների տեսականու և գների վերաբերյալ մատչելի և ստույգ տեղեկատվությամբ:

Պատվերների ընդունման և ապրանքների հանձնման ժամկետները սահմանում է վաճառողը:

Պատվերի ընդունման և մատուցվող ծառայության գինը հաշվարկվում է վաճառողի և վճարվում գնորդի կողմից՝ ապրանքի հաշվի վճարման հետ միաժամանակ:

11. Դեղերի վաճառքն իրականացվում է դեղատների միջոցով:

Գնորդին (սպառողին) վաճառված պատշաճ որակի դեղերը ենթակա չեն փոխարինման և (կամ) վերադարձման:

12. Զենքի, *փամփուշտների*[*2)], պայթուցիկ նյութերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի և անասնաբուժական դեղամիջոցների վաճառքն իրականացվում է միայն առանձնացված առևտրի օբյեկտներում:

12.1. Տեխնիկական և հատուկ նշանակության հրվառությունների համար նախատեսված հրագործական նյութերի (արտադրանքի), հրագործական բաղադրիչների և այլ պայթուցիկ սարքերի (նյութի) վաճառքը թույլատրվում է բացառապես սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն ստացած իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի:[*15)]

Զենքի, *փամփուշտների*[*2)], պայթուցիկ նյութերի, թունաքիմիկատների, պարարտանյութերի և անասնաբուժական դեղամիջոցների վաճառքի առանձնահատկությունները սահմանում է *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարությունը:

13. Կրպակներում վաճառքի են թույլատրվում միայն արտադրական կշռափաթեթավորում ունեցող և հատային ապրանքները:

14. Կրպակներում արգելվում է վաճառել՝

ա) պարտադիր ջերմային ռեժիմով տեղափոխում և պահում պահանջող սննդամթերքը, բացառությամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի և գարեջրի, որոնց տեղափոխումը և պահումը պետք է կատարվի դրանց տեղափոխման և պահման համար նախատեսված հատուկ սառնարաններում.

բ) չափափորձարկում պահանջող ապրանքները:

15. Հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտրի առանձնահատկություններն են՝

ա) հացի և հացաբուլկեղենի մանրածախ առևտուրն իրականացվում է հացի և հացաբուլկեղենի մասնագիտացված խանութներում, առանձնացված կրպակներում, սննդամթերքի մասնագիտացված խանութների առանձնացված բաժիններում, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների տարածքում գտնվող առանձնացված առևտրի օբյեկտներում, իսկ մանր կշռափաթեթավորված հատային ապրանքները՝ նաև շրջիկ առևտրի կետերի միջոցով.

բ) *մատակարարվող*[*16)] ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթում պարտադիր պետք է նշված լինեն վաճառանից արտադրանքի հանման *օրը*[*16)] և քաշը.

գ) վաճառվող փաթեթավորված և ոչ փաթեթավորված հացի գնապիտակի վրա, բացի սույն հոդվածի 3-րդ մասով սահմանվող պահանջներից, նշվում են նաև մեկ միավոր հացի քաշը և դրա շեղումների թույլատրելի չափը:[*3)]

16. Արգելվում է ալկոհոլային խմիչքների վաճառքն ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի օբյեկտներում:

17. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, կոմպրեսացված (սեղմված) բնական գազերի*[*6)], *հեղուկացված գազերի վաճառքը թույլատրվում է իրականացնել օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանող սարքավորումներով և գործարանային արտադրության ավտոցիստեռններով:*

18. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերից դուրս Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքն արգելվում է, բացառությամբ Արցախի[*18)] *Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պատերազմական գործողություններից տուժած, նոր բնակեցվող, ծայրամասային և լքված բնակավայրերի:*[*2),*6),*7)]

19. Կենդանի կենդանիների վաճառքն իրականացվում է միայն կենդանիների շուկաներում և առանձնացված առևտրի օբյեկտներում:

Առևտրի օբյեկտներում արգելվում է վաճառել արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 0101-0105 ծածկագրերին դասվող կենդանի կենդանիներ (ձիեր, ավանակներ, ջորիներ, խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, ոչխարներ, այծեր, տնային հավեր, բադեր, սագեր, հնդկահավեր և խայտահավեր):

20. Արտադրողները, մատակարարները, այդ թվում՝ դիստրիբյուտորները մատակարարման պայմանագրերով ապրանքների (այդ թվում՝ արտադրատեխնիկական նշանակության) վաճառքն իրականացնում են առանձնացված խանութների, սպառողական ապրանքների շուկաների, ապրանքային պահեստների, ցուցահանդես-վաճառքի իրականացման վայրերի միջոցով:[*2)]

21. *(ուժը կորցրած է ճանաչվել 17.09.08թ. ՀՕ-53-Ն օրենքով)*[*2)]

22. Դիստրիբյուտորի և դիլերի գործունեությունը Արցախի[*18)] *Հանրապետության տարածքում թույլատրվում է միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում:*

23. Դիստրիբյուտորը և դիլերը պարտավոր են ապահովել սույն օրենքով սահմանված՝ վաճառողին և կատարողին ներկայացվող պահանջների կատարումը:

24. Ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում արգելվում է օգտագործել այլ անձանց պատկանող և Արցախի[*18)]

Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը կամ ֆիրմային անվանումը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունը:[*2)]

Հոդված 9.1 Ապրանքների դրոշմավորումը

1. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Արցախի[*18)] *Հանրապետության տարածքում օտարման ենթակա (օտարվող)՝ սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:*

2. Եթե սույն հոդվածով այլ բան սահմանված չէ, դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն են կրում Արցախի[*18)] *Հանրապետության տարածք «բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով*[*19)] *պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ անձինք) և Արցախի*[*18)] *Հանրապետությունում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք:*

2.1. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձինք[*18)] *կարող են մինչև Արցախի*[*18)] *Հանրապետության օրենքներով սահմանված՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման իրացնելու վերջնաժամկետները Արցախի*[*18)] *Հանրապետության կառավարության սահմանած կարգով դրոշմավորել իրենց մոտ առկա՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդները:*

Սույն մասով սահմանված դեպքերում անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց[*18)] *նկատմամբ կիրառվում են պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող անձանց*[*18)] *համար սույն օրենքով և դրոշմապիտակների համակարգի կիրառությունն ապահովող համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նախատեսված կարգավորումները, եթե վերջիններիս մասով օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:*[*9)]

2.2. Սույն օրենքի իմաստով՝ Արցախի Հանրապետությունում դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող են համարվում նաև դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներն այլ կերպ տարայավորող (փաթեթավորող, շշալցնող) անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2.3-րդ մասով նախատեսված դեպքերի:

2.3. Մանրածախ առևտրի ոլորտում դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքներ օտարող անձինք դրոշմավորման պար-տա-վորություն չեն կրում, եթե այդ ապրանքների նոր տարայով տարայավորումը (փաթե-թավորումը, շշալցումը) կատարվում է օտարման պահին, կամ այդ ապրանքների փաթեթավորումն իրականացվում է կշռող սարքի օգտագործմամբ իրականացվող առևտրային գործարքների ժամանակ:

2.4. Կազմակերպությունների (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների) կամ անհատ ձեռնարկատերերի պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է պատվիրատուն:

2.5. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց պատվերով դրոշմավորման ենթակա ապրանքներն այլ հարկ վճարողների կողմից արտադրվելու կամ շշալցվելու կամ այլ կերպ տարայավորվելու (փաթեթավորվելու) և պատվիրատուին վերադարձվելու դեպքում դրոշմավորման պարտավորությունը կրում է այդ ապրանքներն արտադրողը կամ շշալցնողը կամ այլ կերպ տարայավորողը (փաթեթավորողը):

2.6. Որպես գրավի առարկա գրավառուին հանձնված դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների՝ մինչև սեփականության իրավունքի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելը դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավատուն: Գրավի առարկա հանդիսացող՝ դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքների սեփականության իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորությունը կրում է գրավառուն:[*18)]

3. Պարտադիր դրոշմավորման ենթակա չեն ֆիզիկական անձանց կողմից որպես ուղեկցող բեռ Արցախի[*18)] *Հանրապետություն ներմուծվող՝ մաքսային օրենսդրությամբ սահմանված արժեքային, բնաիրային և քանակական չափերը չգերազանցող՝ սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:*

4. Սույն օրենքի 9.1-9.7-րդ հոդվածների և 18-րդ հոդվածի 3-րդ մասի[*12)] *կիրառման լիազոր մարմին է հանդիսանում հարկային մարմինը*[*11)]*:*

5. Սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված՝ Արցախի[*18)] *Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների դրոշմավորմանը, դրոշմապիտակների ձևին, տրամադրմանը, օգտագործմանը, վերադարձմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով;*[*7)]

Հոդված 9.2 Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքները

1. Դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներն են (այսուհետ՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ).[*14),*8)]

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը
0207	ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	միս
0209	*անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ և*[*14),] *չհալեցրած կամ այլ եղանակով չստացած ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած*	*միս*
0210	*ընտանի թռչունների միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած. մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված մանր և խոշոր աղացվածքի այլուր*	*միս*
0401	կաթ և սերուցք՝ ոչ խտացված և առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման	կաթնեղեն
0402	կաթ և սերուցք՝ խտացված կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	կաթնեղեն
0403	թան, մակարդված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ ֆերմենտացված կամ խմորված կաթ և սերուցք՝ խտացված կամ ոչ խտացված, շաքարի հավելմամբ կամ առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման, համաբուրային հավելումներով կամ առանց դրանց, մրգերի, ընկույզների կամ կակաոյի հավելմամբ կամ առանց դրանց	կաթնեղեն
0404	կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, մթերք կաթի բնական բաղադրիչներից՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված	կաթնեղեն
0405	կարագ և կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր, կաթնային մածուկներ	կաթնեղեն
0406	պանրի տեսակներ և կաթնաշոռ	կաթնեղեն
0901	սուրճ՝ բռված կամ չբռված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի կեղև և սուրճի հատիկների թաղանթ (պատյան), սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճ պարունակող	սուրճ
0902	թեյ՝ համաբուրային հավելումներով կամ առանց դրանց	թեյ
0903 00 000 0 *19)	մատե կամ պարագվայական թեյ	թեյ
1504	ձկան կամ ծովային կաթնասունների ճարպեր, յուղեր և դրանց զտամասեր՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1505 00 *19)	ճարպաքրտինք և դրանից ստացվող ճարպանյութեր (ներառյալ՝ լանոլինը)	ճարպեր և յուղեր
1506 00 000 0 *19)	կենդանական այլ ճարպեր, յուղեր և դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1507	սոյայի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական	ձեթ

	բաղադրության փոփոխության	
1508	գետնանուշի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1509	ձիթապտղի ձեթ և դրա խառնուրդամասեր՝ չզտված կամ զտված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1510 *19)	այլ յուղեր և դրանց զտամասերը, որոնք ստացվում են միայն կանաչ կամ սև ձիթապտղից՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը, ներառյալ՝ այդ յուղերի կամ զտամասերի խառնուրդներն ապրանքային 1509 դիրքում ընդգրկված յուղերի կամ դրանց զտամասերի հետ	այլ յուղեր
1512 11 910	արևածաղկի ձեթ	ձեթ
1512 19 900	արևածաղկի ձեթ	ձեթ
1515	այլ չցնդող բուսական ճարպեր, յուղեր (ներառյալ՝ ժոժոբայի յուղը) և դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1516 20 960 2	խաղողի կորիզներից յուղ	յուղ
1517	մարգարին. սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերք՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի տարբեր ճարպերի կամ յուղերի զտամասերից՝ բացի 1516 ապրանքային դիրքում նշված սննդի ճարպերից կամ յուղերից կամ դրանց զտամասերից	մարգարին
1601 00 *19)	երշիկներ և մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված համանման մթերք. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերք	պատրաստի սննդամթերք
1602	մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված այլ մթերք	մսեղեն
1603 00 *19)	լուծամզվածքներ և հյութեր մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից կամ ջրային այլ անողնաշարավորներից	պատրաստի սննդամթերք
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ, թառափազգիների խավիար և դրա փոխարինիչներ՝ պատրաստված ձկնկիթի հատիկներից	ձկնեղեն
1605	պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	ձկնեղեն
1806	շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք	կակաո և դրանից պատրաստված մթերք
1901	ածիկային լուծամզուք, պատրաստի սննդամթերք՝ պատրաստված մանր կամ խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից, օսլայից կամ ածիկային լուծամզուքից՝ առանց կակաոյի պարունակության կամ 40% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ տեղում չնշված կամ չներառված, 0401-0404 ապրանքային դիրքերում ընդգրկված հումքից ստացված պատրաստի սննդամթերք՝ առանց կակաոյի պարունակության կամ 5% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ՝ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ	խտացրած կաթ

	տեղում չնշված կամ չներառված	
1902	մակարոնային արտադրատեսակներ՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, միջուկով (մսից կամ այլ մթերքից) կամ առանց միջուկի կամ այլ եղանակով պատրաստված, ինչպես, օրինակ՝ սպագետտի, մակարոն, լապշա, եղջրիկներ, խմորագնդիկներ, ռավիոլա, կաննելոն, կուսկուս՝ պատրաստի կամ ոչ պատրաստի սննդի մեջ օգտագործելու համար	պատրաստի մթերք
1903 00 000 0 *19)	տապիոկ և դրա փոխարինիչները՝ պատրաստված օսլայից փաթիլների, հատիկների (գրանուլների), ձավարահատիկների, մանրահատիկների կամ նույնանման այլ տեսքով	պատրաստի մթերք
1904	պատրաստի սննդամթերք՝ ստացված հացաբույսերի հատիկները կամ հացահատիկային մթերքը (օրինակ՝ եգիպտացորենի փաթիլներ) փքելու կամ բովելու միջոցով, հացաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկներից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով (բացի մանր և խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից)՝ նախապես եփած կամ այլ եղանակով պատրաստված, այլ տեղում չնշված կամ չներառված	պատրաստի մթերք
2001	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ	պահածո
2002	լոլիկներ (պոմիդոր)՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի	պահածո
2003	սնկեր և գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո
2004	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, սառեցված, բացի 2006 00 *19) ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2005	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, չսառեցված, բացի 2006 00 *19) ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2006 00 *19)	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ, պտուղների կեղև և բույսերի այլ մասեր՝ շաքարի միջոցով պահածոյացված (շաքարի օշարակով ներծծված, շաքարահյութով պատված, շաքարահյութով եփված, շաքարված)	պահածո
2007	ջեմեր, մրգային ժելե, մարմելադներ, մրգային կամ ընկույզի պյուրե, մրգային կամ ընկույզի մածուկ՝ ստացված ջերմային մշակումից, այդ թվում՝ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	պահածո
2008	մրգեր, ընկույզներ և բույսերի ուտելի այլ մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված այլ եղանակով՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր կամ սպիրտ պարունակող կամ չպարունակող՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	պահածո
2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր՝ չխմորված և սպիրտ չավելացված	հյութ

2101	սուրճի, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) լուծամզուքներ, բնահյութեր և խտածոներ (կոնցենտրատներ) և պատրաստի մթերք՝ դրանց կամ սուրճի հիմքով, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) հիմքով. բոված եղերդ և սուրճի այլ բոված փոխարինիչներ և դրանց լուծամզուքները, բնահյութերը և խտածոները	սուրճի և թեյի լուծամզուք
2105 00	պաղպաղակ և սննդային սառույցի այլ տեսակներ՝ կակաո պարունակող կամ չպարունակող	պաղպաղակ
2201	ջրեր, ներառյալ՝ բնական կամ արհեստական հանքային ջրերը՝ գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման	ջուր
2202	ջրեր, ներառյալ՝ հանքային և գազավորված ջրերը՝ շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմամբ և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	ըմպելիք
2203 00 *19)	գարեջուր	գարեջուր
2208	ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային դիրքին դասվող՝ մինչև 9% սպիրտայնության խմիչքներ, ներառյալ՝ ալկոհոլային կոկտեյլներ	կոկտեյլ
2209 00	քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից	քացախ
2309	կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերք	մթերք
	Տողը հանվել է *14)	
2404 12 000 0	*նիկոտին պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ միանգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության*	*ծխախոտի արտադրանք*
2404 19 000	*նիկոտին չպարունակող, այդ թվում՝ ծխախոտի փոխարինիչներ պարունակող հեղուկ քարթրիջներ, այդ թվում՝ միանգամյա օգտագործման էլեկտրոնային սիգարետներ հեղուկով՝ առանց վերալիցքավորման հնարավորության*	*ծխախոտի արտադրանք *19)*
2710 19 710 0 2710 19 750 0 2710 19 820 0 2710 19 840 0 2710 19 860 0 2710 19 880 0 2710 19 920 0 2710 19 940 0 2710 19 980 0	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք
2936	պրովիտամիններ, վիտամիններ	վիտամին
3002 41 000 0 *19)	պատվաստանյութ՝ մարդու համար, մանրածախ առևտրի համար	պատվաստանյութ
3002 42 000 0 *19)	պատվաստանյութ՝ կենդանիների համար	պատվաստանյութ
3003	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար, մանրածախ առևտրի համար չփաթեթավորված	դեղ
3004	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար, բացառությամբ պետության կողմից կենտրոնացված	դեղ

	կարգով ձեռք բերվող և երաշխավորված կարգով տրամադրվող ինսուլինի կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղերի, որոնց համար դրոշմապիտակով դրոշմավորում չի պահանջվում	
3203 00	բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութեր (ներառյալ՝ ներկող լուծամզուքները, բացի կենդանական ածուխից)՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութերի հիմքով պատրաստված պատրաստուկներ	ներկանյութեր
3204	օրգանական սինթետիկ ներկող նյութեր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, պատրաստուկներ՝ պատրաստված տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված օրգանական սինթետիկ ներկող նյութերի հիմքով, օրգանական սինթետիկ արտադրանք, որն օգտագործվում է որպես օպտիկական սպիտակեցնող նյութ կամ լյումինաֆոր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3205 00 000 0	գունավոր լաքեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված գունավոր լաքերի հիմքով պատրաստուկներ	լաքեր
3206	ներկող այլ նյութեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված և 3203, 3204 կամ 3205 ապրանքային դիրքերում ընդգրկված պատրաստուկներից տարբեր պատրաստուկներ, որպես լյումինաֆոր օգտագործվող անօրգանական արտադրանք՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3207 10 000 0	պատրաստի գունանյութեր, ապակու պատրաստի պղտորիչներ և պատրաստի ներկեր և համանման պատրաստուկներ	ներկանյութեր
3208	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված, տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ	ներկանյութեր
3209	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված	ներկանյութեր
3210 00	այլ ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները, ողորկալաքերը և սոսնձային ներկերը), պատրաստի ջրային գունանյութեր՝ կաշվի մշակման համար օգտագործվող	ներկանյութեր
*3211 00 000 0 [*19)]*	*պատրաստի չորարարներ*	*չորարարներ*
3212	*գունանյութեր (ներառյալ մետաղական փոշիներ և փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ արծնները), փայլաթիթեղ դրոշմատպման համար, ներկանյութեր և*	*գունանյութեր*

	ներկող այլ նյութեր՝ բաժնեծրարված կամ փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	
3303 00	օծանելիք, հարդաջուր	օծանելիք
3304	կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման և մաշկի խնամքի այլ միջոցներ (բացառությամբ դեղամիջոցների), ներառյալ՝ արևայրուքի դեմ կամ արևայրուքի համար միջոցներ, ձեռքերի կամ ոտքերի մատնահարդարման միջոցներ	կոսմետիկա
3305	մազերի խնամքի միջոցներ	կոսմետիկա
3306	բերանի խոռոչի և ատամների հիգիենայի միջոցներ, ներառյալ՝ ատամնապրոթեզների ֆիքսման փոշիներն ու մածուկները, միջատամային տարածքները մաքրելու թելեր (ատամները մաքրելու մետաքսաթել)՝ անհատական փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	հիգիենայի միջոցներ
3307	միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, բաղադրություններ՝ լոգանք ընդունելու համար, մազահեռացման միջոցներ և օծանելիքային, կոսմետիկական ու հարդարման այլ միջոցներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված. հոտազերծիչներ՝ նախատեսված շենքերում օգտագործելու համար՝ բուրավետացված կամ ոչ բուրավետացված, ախտահանիչ հատկություններով օժտված կամ առանց դրանց	խնամքի միջոցներ
3401	օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ, որպես օճառ կիրառվող (կտորների, քառակողիկների կամ կաղապարվածքների ձևով)՝ օճառ պարունակող կամ չպարունակող, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և մաշկը լվանալու համար միջոցներ՝ հեղուկների կամ քսուքների տեսքով՝ կշռաբաշխված մանրածախ առևտրի համար՝ օճառ պարունակող կամ չպարունակող, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք (ֆետր) և չհյուսված նյութեր՝ ներծծված կամ պատված օճառով կամ լվացող միջոցով	օճառ
3402	մակերևութային ակտիվ օրգանական նյութեր (բացի օճառից), մակերևութային ակտիվ նյութեր, լվացող միջոցներ (ներառյալ՝ օժանդակ լվացող միջոցները) և մաքրող միջոցներ՝ օճառ պարունակող կամ չպարունակող (բացի 3401 ապրանքային դիրքի միջոցներից)	օճառ
3403 19 100 0 3403 19 900 0 3403 99 000 0	*քսայուղեր, այլ յուղեր*	*նավթավերամշակման արտադրանք*[*7), *8), *12)]

*2. Արցախի[*18)] Հանրապետության տարածքում արտադրված կամ Արցախի[*18)] Հանրապետության տարածք ներմուծված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված)՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ապրանքների վրա Արցախի[*18)] Հանրապետության տարածքում օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե այդ ապրանքներն օտարվում են նույն տարայավորմամբ (փաթեթավորմամբ) ու ապրանքային տեսքով՝ առանց քաշը (ծավալը) փոփոխելու, բացառությամբ սույն հոդ-վածի 3-րդ և 4-րդ մասերով[*18)] սահմանված դեպ-քերի:*

*3. ԱՏԳ ԱԱ 0405, 0406,[*18)] 0901, 0902, 0903 00 000 0[*19)], 1806 և 2101 ծածկագրերին դասվող՝ մինչև 100 գրամ (ներառյալ) կամ 100 գրամից առավելագույնը 10 տոկոս շեղումով պարունակություն ունեցող՝ տարայավորված (փաթեթավոր-ված) ապրանքները ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:[*14)]*

*4. ԱՏԳ ԱԱ 3303 00[*19)], 3304, 3305 և 3401 ծածկագրերին դասվող՝ մինչև 2 գրամ զտաքաշ կամ 2 միլիլիտր ծավալ ունեցող ապրանքները (այդ թվում՝ փորձանմուշները) ենթակա չեն դրոշմապիտակներով դրոշմավորման:[*18)]*

Հոդված 9.3 Արցախի[*18)] Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների տրամադրման կարգը

*1. Արցախի[*18)] Հանրապետության տարածքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման հարկային մարմնից՝ մինչև այդ ապրանքների օտարումը:*

*2. Դրոշմապիտակները տրամադրվում են միայն Արցախի[*18)] Հանրապետությունում գրանցված (հաշվառված) սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց՝ նրանց կողմից դրոշմապիտակների ձեռք բերման ամբողջ արժեքը նախապես պետական բյուջե վճարելու դեպքում:*

3. Դրոշմապիտակները հարկային մարմնի կողմից տրամադրվում են դրոշմապիտակի ձեռք բերման հայտի (այսուհետ՝ հայտ) հիման վրա:

Դրոշմապիտակները տրամադրվում են դրանց ձեռք բերման համար հայտ ներկայացրած կազմակերպության լիազորած ֆիզիկական անձին, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջը կամ նրա լիազորած ֆիզիկական անձին, եթե դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կողմից դրոշմապիտակների պահանջվող քանակության համար կատարվել է վճարում:

*Ընդ որում, հայտով պահանջվող դրոշմապիտակների քանակության համար վճարման ենթակա գումարը կարող է պակասեցվել դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար ավել վճարված և հայտի ներկայացման օրվա դրությամբ չհաշվանցված և (կամ) չվերադարձված գումարների չափով:[*8)]*

4. Դրոշմապիտակներ ձեռք բերելու համար սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում՝

1) դրոշմապիտակների ձեռք բերման հայտ.

2) դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճեն.

3) նախկինում ձեռք բերված դրոշմապիտակների օգտագործման մասին հաշվետվություն, բացառությամբ առաջին անգամ դրոշմապիտակներ ձեռք բերելու դեպքի.

4) դրոշմապիտակ ստացող անձի լիազորած անձի անձնագրի պատճեն:

Հայտի ընդունումը մերժվում է սույն մասում նշված փաստաթղթերը ոչ լիարժեք ներկայացված լինելու դեպքում, ինչը հայտ ներկայացրած անձին չի զրկում փաստաթղթերը լիարժեք դարձնելուց հետո կրկին դիմելու իրավունքից:

*5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ դրոշմապիտակների տրամադրման պայմանները բավարարված լինելու[*8)] դեպքում դրոշմապիտակները տրամադրվում են հինգ աշխատանքային օրվա ընթացքում:*

Դրոշմապիտակների ստացումը հաստատվում է ստացականով:

6. Հարկային մարմինները յուրաքանչյուր արտադրողի համար վարում են դրոշմապիտակների հաշվառման քարտեր՝ ըստ դրոշմապիտակների տեսակների:

Քարտում նշվում են տրամադրված կամ հետ ընդունված դրոշմապիտակների քանակները, սերիաները և համարները:

*7. Սույն հոդվածով նախատեսված հայտի և հաշվետվության ձևերը սահմանում է հարկային մարմինը[*11)]:[*7)]*

Հոդված 9.4 Արցախի[*18)] Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակներով դրոշմավորման (վերադրոշմավորման) կանոնները

*1. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք ապրանքների դրոշմավորումն իրականացնում են ինքնուրույն՝ սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն ձեռք բերված դրոշմապիտակները այդ ապրանքների վրա փակցնելու միջոցով: Սույն մասի կիրառման առումով դրոշմավորումը կատարվում է Արցախի Հանրապետության տարածքում արտադրված՝ շշալցված կամ ցանկացած այլ կերպ տարայավորված (փաթեթավորված) դրոշմավորման ենթակա ապրանքի միավորի վրա, բացառությամբ սույն հոդվածի 1.3-րդ մասով սահմանված դեպքի:[*18)]*

1.1. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով

դրոշմավորման ենթակա և ոչ ենթակա ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումը իրականացվում է միայն դրոշմավորման ենթակա ապրանքի մասով՝ սույն հոդվածի և սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն:

1.2. Եթե դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող հարկ վճարողների կողմից օտարվում են նույն փաթեթում կամ ցանկացած այլ ձևի տարայում գտնվող դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա մեկից ավելի ապրանքներ, ապա դրանց դրոշմավորումն իրականացվում է յուրաքանչյուր դրոշմավորման ենթակա ապրանքի մասով առանձին՝ սույն հոդվածի և սույն օրենքի 9.3-րդ հոդվածի համաձայն, բացառությամբ սույն հոդվածի 1.3-րդ մասով սահմանված դեպքի:

*1.3. ԱՏԳ ԱԱ 0207 և 0210 ծածկագրերին դասվող՝ ընտանի թռչունների պաղեցված կամ սառեցված մսի դրոշմավորումը կարող է իրականացվել յուրաքանչյուր արկղի համար:[*18)]*

*2. Արցախի[*18)] Հանրապետության տարածքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել ապրանքի արտադրության կամ իրացման նախապատրաստման ցանկացած փուլում՝ իրենց կողմից ընտրված տարածքում, բայց ոչ ուշ մինչև այդ ապրանքների օտարումը:*

*3. Դրոշմավորված ապրանքի վրա պետք է փակցված լինի չվնասված, ամբողջական և դրոշմավորման ենթակա ապրանքի տարողությանը (ծավալին, քաշին կամ տվյալ ապրանքատեսակին բնորոշ չափման այլ միավորին) համապատասխանող դրոշմապիտակ:[*8)]*

*4. Ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները (այդ թվում՝ դրոշմավորման ենթակա յուրաքանչյուր ապրանքախմբի համար դրոշմապիտակի փակցման տեղը) սահմանում է Արցախի[*18)] Հանրապետության կառավարությունը:*

*Սույն օրենքի 9.2-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում նշված՝ ԱՏԳ ԱԱ 0207, 0209, 0210, 0406, 1601 00[*19)], 1602, 1603 00[*19)], 1604 և 1605 ծածկագրերին դասվող ապրանքա-տե-սակ-ների՝ հայտում ներկայացված քաշի և օտարման պահին փաստացի քաշի միջև առկա դրական տարբերությունը չի համարվում ապրանքների դրոշմավորման կանոն-ների խախտում, եթե այդ տարբերությունը չի գերազանցում հայտում ներկայացված քաշի 10 տոկոսը:[*14)]*

*5.Արգելվում է դրոշմապիտակների օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը) այլ անձանց, բացառությամբ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով[*19)] արտահանված դրոշմապիտակներն օտարերկրյա պայմանադիր կողմին փոխանցելը:[*7)]*

Հոդված 9.5 Արցախի[*18)] Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակների նմուշների, տեխնիկական պահանջների արժեքի սահմանումը, դրոշմապիտակները կիրառության մեջ դնելը և կիրառությունից հանելը

*1. Դրոշմապիտակների նմուշները (այդ թվում՝ ձևը, գույնը) և տեխնիկական պահանջները սահմանում է հարկային [*18)] մարմինը: Տեղական արտադրության ապրանքների դրոշմապիտակները պետք է ունենան «տեղական» մակագրությունը:[*8)]*

2. Դրոշմապիտակի դարձերեսը պետք է ծածկված լինի փակցնելուց հետո այն անվնաս պոկելու հնարավորությունը բացառող սոսնձով:

*3. Դրոշմապիտակի արժեքը որոշվում է տվյալ նմուշի դրոշմապիտակի արտադրության, պահպանության, օգտագործումից հանելու հետ կապված ծախսերից: Յուրաքանչյուր օրացուցային տարում կիրառվող դրոշմապիտակների արժեքը սահմանում է Արցախի[*18)] Հանրապետության կառավարությունը:*

*Դրոշմապիտակների սահմանված արժեքը հրապարակվում է հարկային մարմնի[*11)] պաշտոնական ինտերնետային կայքում՝ յուրաքանչյուր տարվա սկզբից առնվազն մեկ ամիս առաջ: Սույն մասով սահմանված ժամկետում դրոշմապիտակների արժեքը չհրապարակվելու դեպքում տվյալ օրացուցային տարում կիրառվում է դրոշմապիտակի նախորդ տարվա արժեքը:*

*4. Հարկային մարմնի[*11)] սահմանած նմուշի դրոշմապիտակները կիրառության մեջ դրվում և կիրառությունից հանվում են Արցախի[*18)] Հանրապետության կառավարության որոշմամբ:*

*5. Կիրառությունից հանված դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների օտարումը թույլատրելի լինելու ժամկետից հետո կարող է իրականացվել անմիջական արտադրողի կողմից ապրանքների՝ նոր նմուշի դրոշմապիտակներով դրոշմավորված (հերթական թվով նմուշի դրոշմապիտակով վերադրոշմավորված) լինելու դեպքում:[*7)]*

Հոդված 9.6 Օգտագործված դրոշմապիտակների ձեռք բերման համար վճարված գումարների՝ հարկ վճարողի պարտավորությունների դիմաց հաշվանցումը

*1. Հայաստանի Հանրապետության կամ Արցախի[*18)] Հանրապետության տարածքում իրացված ապրանքների դրոշմավորման համար օգտագործված դրոշմապիտակների ձեռքբերման համար արտադրողի կողմից վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռքբերման համար*

վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) [*18)] *հարկային մարմնի կողմից սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորու-թյունների դիմաց:*

Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի վճարված գումարները դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կողմից ներկայացված դիմումի հիման վրա օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվանցվում են հարկ վճարողի առկա և (կամ) հետագա հարկային պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում՝ վերադարձվում:

Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողի կողմից նախկինում ստացված դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարներից ավելի վճարված գումարները կարող են հաշվանցվել նաև նոր ձեռքբերվող դրոշմապիտակների համար վճարման ենթակա գումարի դիմաց: [*7), *8)]

Հոդված 9.7 Արցախի [*18)] ***Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար ձեռք բերված և չօգտագործված (այդ թվում՝ վնասված) դրոշմապիտակների վերադարձը***

1. Ձեռք բերված և չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են հարկային մարմին մինչև դրանց ստացման ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին օրը ներառյալ: [*18)]

2. Տվյալ նմուշի չօգտագործված դրոշմապիտակները վերադարձվում են կիրառությունից հանելու վերաբերյալ Արցախի [*18)] *Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող եռամսյա ժամկետում:*

3. Փակցնելու ընթացքում վնասված դրոշմապիտակները (բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված դրոշմապիտակների) [*18)] *սույն հոդվածով սահմանված կարգով և դեպքերում վերադարձվում են հարկային մարմին՝ յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ մինչև կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:*

4. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների (բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված դրոշմապիտակների) [*18)] *վերադարձը սույն հոդվածով սահմանված ժամկետներից ուշացնելու, սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում հարկային մարմինների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը և տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:*

5. Սույն օրենքի 9.2-րդ հոդվածում նշված՝ պիտանելիության (պահպանման) ժամկետ ունեցող ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների գծով հարկային պարտավորություններ չեն առաջանում, եթե համապատասխան հաշվարկային և այլ փաստաթղթերով հիմնավորվում է, որ տվյալ ապրանքները պիտանելիության (պահպանման) ժամկետի ընթացքում չեն իրացվել և այդ ժամկետի ավարտից հետո Արցախի [*18)] *Հանրապետության կառավարության սահմանած կարգով դուրս են գրվել:*

Պիտանելիության ժամկետը լրացած, սահմանված կարգով դուրս գրված ապրանքների վրա փակցված դրոշմապիտակների համար վճարված գումարով նախկինում նվազեցված հարկային պարտավորությունների գումարի չափով արտադրողի մոտ այդ ապրանքների դուրս գրման օրվա դրությամբ առաջանում է դրոշմապիտակների գծով պարտավորություն: Սույն մասին համապատասխան առաջացնող՝ դրոշմապիտակների գծով չմարված պարտավորության գումարի նկատմամբ հաշ-վարկվում են օրական տույժեր՝ «Հարկերի մասին» [*18)] *օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով: Սույն մասով սահմանված՝ դրոշմապիտակների գծով պարտավորությունների հաշվարկման և մարման կարգը սահմանում է Արցախի* [*18)] *Հանրապետության կառավարությունը:* [*8)]

6. Չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների (բացառությամբ դրոշմավորման ընթացքում խոտանված դրոշմապիտակների) [*18)] *վերադարձման համար տնտեսավարող սուբյեկտները հարկային մարմին են ներկայացնում դիմում՝ նշելով դրոշմապիտակների վերադարձման պատճառները:*

Հարկային մարմինը դրոշմապիտակներ վերադարձնելու մասին դիմումը ստանալուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, ստուգում է վնասված դրոշմապիտակների համապատասխանությունը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին և ընդունում է որոշում օրենքի պահանջներին դրանց համապատասխանության մասին: Չօգտագործված դրոշմապիտակները հետ են ընդունվում առանց սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջներին դրանց համապատասխանությունը ստուգելու: Չօգտագործված դրոշմապիտակների համար վճարված գումարը հաշվանցվում է հարկ վճարողի հարկային պարտավորությունների դիմաց, իսկ դրանց բացակայության դեպքում վերադարձվում է հարկ վճարողին: Վնասված և հետ ընդունված կամ հետ չընդունված դրոշմապիտակների համար վճարված գումարը վերադարձման ենթակա չէ: [*8)]

7. Հարկ վճարողի կողմից վերադարձվող դրոշմապիտակները հարկային մարմնի կողմից չեն ընդունվում, եթե չեն պահպանվել հետևյալ պայմանները՝

1) դրոշմապիտակները պետք է փակցված լինեն առանձին էջերի վրա՝ առանց ծալքերի և անհարթությունների.

2) պետք է պարզ երևան դրոշմապիտակի սերիան և դրա կենտրոնական մասը.

3) դրոշմապիտակների պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացված լինեն.

4) վերադարձվող յուրաքանչյուր դրոշմապիտակի մակերեսը (այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60 տոկոսը: [*7)]

8. Սույն օրենքի իմաստով խոտանված են համարվում դրոշմավորման ընթացքում վնասված դրոշմապիտակները, որոնց քանակը չի գերազանցում սույն օրենքի 9.3-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ներկայացված վերջին հաշվետվությունում նշված՝ օգտագործված դրոշմապիտակների քանակի 0,5 տոկոսը: [*18)]

ԳԼՈՒԽ 3

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոդված 10. Հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքի իմաստով հանրային սննդի ծառայության ոլորտում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ) [*2)]՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում.

հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր.

խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ.

ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի գնի նշումով.

հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր.

վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ.

(ուժը կորցրած է ճանաչվել 17.09.08թ. ՀՕ-53-Ն օրենքով) [*2)]

Հոդված 11. Հանրային սննդի օբյեկտների դասակարգումը և դրանց ներկայացվող պահանջները

1. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ճաշարաններ, ռեստորաններ, սրճարաններ, բարեր, բուֆետներ և խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտների:

2. Հանրային սննդի ծառայություններն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

3. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով: [*2)]

4. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցանակներ, սանհանգույցներ:

5. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը:

6. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:

7. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի *Արցախի* [*18)] Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

8. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով: [*2)]

Հոդված 12. Հանրային սննդի օբյեկտի վաճառողին և աշխատողին ներկայացվող պահանջները

1. Վաճառողը պարտավոր է ապահովել սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը:

2. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:

3. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):

Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:

4. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պետական ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ *պետական հաշվառման*[*7)] համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

5. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

*6. Աշխատողներից՝[*16)] խոհարարը, հրուշակագործը [*16)] [*3)] պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:*

*Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:[*2)]*

7. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:

Գ Լ Ո Ւ Խ 4

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 13. Հիմնական հասկացությունները

Սույն օրենքի իմաստով կենցաղային ծառայության ոլորտում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

կենցաղային ծառայություն՝ սպառողների կենցաղային կարիքների բավարարման համար՝ նրանց պատվերով կատարողի կողմից մատուցվող ծառայություն:

Կենցաղային ծառայությունների ցանկը հաստատում է *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարությունը.

կենցաղային ծառայության օբյեկտներ՝ կենցաղային ծառայությունների համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ տարածք.

կատարող՝ սպառողների համար պայմանագրով աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

*(ուժը կորցրած է ճանաչվել 17.09.08թ. ՀՕ-53-Ն օրենքով)[*2)]*

Հոդված 14. Կենցաղային ծառայության օբյեկտներին ներկայացվող պահանջները

1. Կենցաղային ծառայության օբյեկտներում գործունեությունն իրականացնում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

2. Կենցաղային ծառայության օբյեկտներում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցվում է մատուցվող ծառայությունների գնացուցակը:

3. Կենցաղային ծառայության օբյեկտները պետք է ապահովված լինեն *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:

*4. Ելնելով կենցաղային ծառայության օբյեկտի առանձնահատկություններից՝ կենցաղային ծառայության օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:[*2)]*

Հոդված 15. Կենցաղային ծառայության օբյեկտների կատարողին և աշխատողին ներկայացվող պահանջները

1. Կատարողը պարտավոր է ապահովել սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դրույթների պահանջների կատարումը:

2. Կենցաղային ծառայության օբյեկտներում ծառայությունների պատվերների ընդունման տեղը և ձևը որոշում է կատարողը:

3. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում, առանձին կենցաղային ծառայությունների մասով, կենցաղային ծառայություններ մատուցող աշխատողը պարտավոր է ունենալ *համապատասխան*

մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական[*2)] կամ առնվազն երկու տարվա համապատասխան աշխատանքային ստաժ:

Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:[*2)]

4. Կատարողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ և կնիքով հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և պաշտոնի նշմամբ:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող կատարողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ *պետական հաշվառման*[*7)] համարի նշմամբ:

Անվանաքարտ կրելու կարգը հաստատում է պետական կառավարման լիազոր մարմինը:

Գ Լ Ո Ւ Խ 4.1

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՏՈՒՐ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոդված 15.1. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առևտուր և (կամ) ծառայություն իրականացնելիս ներկայացվող պահանջները

1. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով առևտուր և (կամ) ծառայություն իրականացնելիս գնորդին պետք է հասանելի լինի հետևյալ տեղեկատվությունը.

1) պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ գործողությունների հաջորդականությունը, այդ թվում՝ օֆերտա կամ ակցեպտ համարվող գործողության վերաբերյալ ճշգրիտ տեղեկություն, որը պետք է պարունակի բավարար և որոշակի տեղեկություններ պայմանագիրը կնքված համարվելու պահի մասին, ինչպես նաև տեղեկատվություն այն գործողության մասին, որն առաջացնելու է վճարման պարտականություն.

2) գնորդի նշած վայր ապրանքի մատակարարման (աշխատանքի կատարման, ծառայության մատուցման) սահմանափակումները՝ մինչև գնորդի կողմից ապրանքը գնելու գործողությունն սկսելը.

3) ապրանքի փոխանակման կամ վերադարձման պահանջների հետ կապված տեղեկությունները.

4) կայքի շահագործման հասանելիության սահմանափակումները՝ դրանց առկայության դեպքում.

5) կայքի շահագործման՝ սարքավորումների կամ ծրագրային ապահովման հետ համատեղելիության կամ փոխգործակցության սահմանափակումները, որոնց մասին տեղյակ է կամ ողջամտորեն պետք է տեղյակ լինի վաճառողը (աշխատանքներ կատարողը, ծառայություններ մատուցողը).

6) բողոքների քննության և վեճերի լուծման արտադատական կարգը.

7) օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր այլ տեղեկատվություն:

2. Ինտերնետային կայքում կամ էլեկտրոնային հավելվածում (էլեկտրոնային առևտրային հարթակում) կարող է հղում նախատեսվել մեկ այլ էլեկտրոնային փաստաթղթի, որը պարունակում է կնքվող պայմանագրի պայմանները: Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է ապահովի տվյալ հղման տեխնիկական հասանելիության կարգն ու ժամկետները:

3. Ինտերնետային կայքը կամ էլեկտրոնային հավելվածը պետք է հնարավորություն ընձեռնի գնորդին պահպանելու կնքված պայմանագիրը կամ պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան պայմանագրի կատարումն սկսելն այն այլ կերպով հասանելի դարձնել կողմին:

4. Ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով, որպես ձեռնարկատիրական գործունեություն, ապրանքների վաճառք կարող են իրականացնել միայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու և էլեկտրոնային եղանակով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ ֆիզիկական անձինք էլեկտրոնային առևտրային հարթակի միջոցով վաճառում են անձնական գույքն ու իրերը, ապա էլեկտրոնային առևտրային հարթակում նախատեսվում է առանձին բաժին (ենթաբաժին)՝ անձնական գույքին վերաբերվող գործարքները տարբերակելու համար:

Գ Լ Ո Ւ Խ 4.2

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 15.2. Հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքի իմաստով սահմանափակման ենթակա ծառայություններին վերաբերվող հիմնական հասկացություններն են՝

1) սահմանափակման ենթակա ծառայություն՝ *սպառողների ժամանցի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված որոշ ծառայությունների համալիր, որոնք մատուցվում են սույն օրենքով սահմանված սահմանափակման ենթակա ծառայությունների օբյեկտներում.*

2) սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ *կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա.*

3) կարաոկե՝ *սահմանափակ ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ հաճախորդը, օգտագործելով նախապես ընտրված երգի ինտերակտիվ նվագակցությունը, ցուցադրում է սիրողական երգեցողություն.*

4) դիսկոտեկ՝ *սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ բարդ ձայնային և լուսավորման համակարգերի ներքո, մշտական պարահրապարակի առկայությամբ, ինչպես նաև վերարտադրված երաժշտության մատուցմամբ, կազմակերպվում են պարային միջոցառումներ.*

5) հեստապարային ակումբ՝ *սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ կազմակերպվում է հեստապար*

6) հեստապար՝ *պարերով և (կամ) երաժշտությամբ ուղեկցվող բեմական ներկայացում, որի մասնակիցները ներկայացման ընթացքում աստիճանաբար մասամբ կամ լրիվ մերկանում են.*

7) բաղնիք, սաունա և շոգեբազնիք՝ *«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հյուրանոցային տնտեսության օբյեկտների մաս չկազմող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ:*

Սույն կետի իմաստով հյուրանոցային տնտեսության օբյեկտի մաս չի համարվում հյուրանոցատիպ հանգրվանում մատուցվող ծառայությունը, որտեղ մատուցվող ծառայությունները չեն ներառում առնվազն մեկ գիշերակաց կամ չի վարվում հաճախորդի կամ հաճախորդի համար ամրագրում կատարող անձի վերաբերյալ տվյալների պատշաճ տեղեկատվության (ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային, իրավաբանական անձանց համար պետական գրանցման տվյալներ, ինչպես նաև հյուրանոցային համարի ամրագրման և զբաղեցման ժամկետների վերաբերյալ) ստացման և պահպանման գործավարություն:

Հոդված 15.3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին ներկայացվող պահանջները

1.Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում տեղակայելն արգելվում է:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվությունը տրամադրում է համայնքի ղեկավարը:

3. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանում է համայնքի ավագանին:[*16)]

Գ Լ Ո Ւ Խ 5
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 16. Պետական կառավարման լիազոր մարմինը և նրա իրավասությունները

Առևտրի և ծառայությունների ոլորտի պետական կառավարումն իրականացնում է *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը:

Հոդված 17. Տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները

1. Առևտրի և ծառայությունների ոլորտում սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը, բացառությամբ 3.1-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ մասի «դ» կետի և 5-րդ մասի, 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերի, 2-րդ մասի, 7-րդ

հոդվածի 1-ին մասի «գ», «դ», «ե» և «զ» կետերի, 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի և 15-րդ մասի «գ» կետի, 11-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 15-րդ հոդվածի 4-րդ մասի, իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները: [*2),*3)]

2. Տեղական ինքնակառավարման մարմինները, սույն հոդվածով նախատեսված գործառույթների կատարման մասով հաշվետու են՝ շրջաններում՝ շրջանի վարչակազմի ղեկավարին, Ստեփանակերտում՝ Արցախի[*18)] *Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնին:* [*7)]

Գ Լ Ո Ւ Խ 5[1]

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 17[1]. Հսկողության իրականացման կարգը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում (այսուհետ՝ ոլորտ) հսկողությունն իրականացվում է սույն օրենքով վերապահված իրավասությունների շրջանակներում:

2. Հսկողության իրականացման կարգը ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից սույն օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակներում իրականացվող հսկողության միջոցառումների ամբողջություն է:

3. Տեղական ինքնակառավարման մարմինները հսկողությունն իրականացնում են համապատասխան աշխատակիցների (այսուհետ՝ տեսուչներ) միջոցով:

4. Հսկողության իրականացումն սկսելու համար հիմք է հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի (այսուհետ՝ իրավասու անձ) հրամանը կամ հանձնարարագիրը:

5. Իրավասու անձի հրամանի կամ հանձնարարագրի համար հիմք են հանդիսանում օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը և քաղաքացիներից (սպառողներից) ստացված առաջարկություններն ու առարկությունները:

6. Հսկողություն իրականացնելու մասին իրավասու անձն արձակում է հրաման կամ տալիս է հանձնարարագիր, որտեղ նշվում են հսկողություն իրականացնող մարմնի անվանումը, տեսուչների (տեսչի) անունը, ազգանունը, հսկողություն իրականացնելու ենթակա տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը:

Հրամանով կամ հանձնարարագրով չամրագրված տեսուչները (տեսուչը) իրավունք չունեն (չունի) մասնակցելու հսկողության իրականացմանը:

7. Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ հսկողության ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան մեկ աշխատանքային օր, ընդ որում, հսկողության փաստացի սկսելու օր է համարվում հսկողություն իրականացվող օբյեկտում պահվող հսկողության մատյանում գրառում կատարելու օրը:

8. Տեսուչները (տեսուչը) սույն օրենքով սահմանված պահանջներին և գործունեության տեսակին համապատասխան՝ իրավունք ունեն (ունի) սույն օրենքով սահմանված պահանջների արձանագրված խախտումները և թերությունները վերացնելու նպատակով տալ հանձնարարականներ և հետևել դրանց կատարմանը:

9. Տեսուչները (տեսուչը) պարտավոր են (է)՝

ա) պահպանել հսկողության իրականացման հետ առնչվող՝ Արցախի[*18)] *Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.*

բ) չհրապարակել տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների մասին ցանկացած, այդ թվում՝ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ.

գ) չխոչընդոտել տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին:

10. Տնտեսավարող սուբյեկտի կողմից սույն օրենքով սահմանված պահանջների խախտման դեպքում տեսուչները (տեսուչը) հատուկ համարակալված պաշտոնաթերթերի վրա կազմում են (է) արձանագրություն երկու օրինակից, իսկ խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրության և տեղեկանքի օրինակելի ձևերը հաստատում է առևտրի և ծառայությունների ոլորտի պետական լիազոր մարմինը:

11. Կազմված արձանագրությունը կամ տեղեկանքը հսկողություն իրականացնող տեսուչները (տեսուչը) երկու օրվա ընթացքում ներկայացնում են (է) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Կազմված արձանագրությունն ստորագրում են (է) տեսուչները (տեսուչը), տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Տարաձայնությունների դեպքում ստորագրողների կարծիքները նշվում են արձանագրությունում:

Արձանագրությունն ստորագրելուց ստորագրողների հրաժարվելու դեպքում այդ մասին արձանագրությունում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից արձանագրությունն ստորագրելու և տարաձայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել երկու աշխատանքային օրը: Արձանագրության պատճենի մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտին:

*12. Հսկողության իրականացման արդյունքներով արձանագրված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է Արցախի[*18)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:*

13. Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի՝

ա) ծանոթանալու հսկողության իրականացման ժամանակ կազմված արձանագրությանը.

*բ) Արցախի[*18)] Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջելու տեսուչների (տեսչի) ապօրինի գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ բաց թողնված օգուտների հատուցում.*

գ) տնտեսավարող սուբյեկտի շահերի և իրավունքների պաշտպանության նպատակով հսկողության իրականացմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, փաստաբանների:

14. Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պարտավոր է՝

ա) կատարել սույն օրենքով սահմանված պահանջները.

բ) չխոչընդոտել հսկողության իրականացման աշխատանքների ընթացքին.

գ) կատարել տեսուչների (տեսչի) օրինական պահանջներն ու ցուցումները:

*15. Սույն օրենքի պահանջների խախտմամբ հսկողություն իրականացնող տեսուչները (տեսուչը) պատասխանատվություն են (է) կրում Արցախի[*18)] Հանրապետության օրենքով սահմանված կարգով:*

16. Տեսուչների (տեսչի) գործողություններն օրենքով սահմանված ժամկետներում կարող են (է) բողոքարկվել այն լիազոր մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են (է) տեսուչները (տեսուչը): Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը մինչև բողոքի վերաբերյալ պատասխան ստանալը կարող է թույլ չտալ շարունակելու հսկողության իրականացումը:

Լիազոր մարմնում բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքը ստացվելու օրվանից 15 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սույն կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

*Լիազոր մարմնի կողմից ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկելու դատական կարգով: [*2)]*

ԳԼՈՒԽ 6

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 18. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջները խախտելու համար առևտրի և ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք (անհատ ձեռնարկատերերը) կրում են պատասխանատվություն՝ Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքով սահմանված դրույթները խախտելու համար կիրառվում են սույն հոդվածով և Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված պատասխանատվության միջոցները:

*3. Դրոշմապիտակների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված դրոշմապիտակներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված դրոշմապիտակներով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներ օտարելու դեպքում, եթե դուրս գրված հաշվարկային փաստաթղթերում նշված դրոշմավորման ենթակա ապրանքի ընդհանուր արժեքը և (կամ)[*18)] օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով՝*

1) չի գերազանցում 50 000 << դրամը, ապա դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ հինգ հարյուր հազար << դրամի չափով.

2) գերազանցում է 50 000 ՀՀ դրամը, ապա դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ ապրանքների ընդհանուր արժեքի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն ՀՀ դրամը:

Սույն մասով սահմանված տուգանքները ենթակա են վճարման պետական բյուջե՝ խախտումն արձանագրելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել [*13), *18), *19)]

Սույն մասով սահմանված խախտումներն արձանագրվում են «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» [*18)] *օրենքով սահմանված կարգով:*[*7), *12)]

Գ Լ Ո Ւ Խ 7

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 19. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա, իսկ *Արցախի*[*18)] Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բնակավայրերի համար՝ երկու տարվա ընթացքում, առևտրի և ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք (անհատ ձեռնարկատերերը) պարտավոր են իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

3. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասով և 15-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների կատարումը 2011[*3)] *թվականի հուլիսի 1-ից պարտադիր է Արցախի*[*18)] *Հանրապետության ողջ տարածքում գործող հանրային սննդի և կենցաղային ծառայությունների աշխատողների համար:*

Սույն մասի պահանջների կատարման ապահովման միջոցառումների ցանկը և ժամանակացույցը հաստատում է Արցախի[*18)] *Հանրապետության կառավարությունը:*[*1)]

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի և 5-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետի պահանջները՝

ա) Արցախի[*18)] *Հանրապետության բնակավայրերում գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի*[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերի համար ուժի մեջ են մտնում 2010 թվականի ապրիլի 1-ից.*

բ) Արցախի[*18)] *Հանրապետության բնակավայրերից դուրս՝ միջպետական, հանրապետական և միջհամայնքային նշանակության ճանապարհներին գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի*[*6),*7)] *մանրածախ առևտրի կետերի համար ուժի մեջ են մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:*

5. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետի և 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի պահանջներն ուժի մեջ են մտնում 2010 թվականի ապրիլի 1-ից:

6. Սույն օրենքի 3.1-րդ հոդվածի պահանջները պարտադիր է 2026[*11), *12), *17)] *թվականի հունվարի 1-ից*[*4),*7)]*:*

7. Սույն օրենքի 3.1-րդ հոդվածով սահմանված լիցենզավորման պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը մինչև 2026[*7),*11),*12), *17)] *թվականի հուլիսի 1-ը*[*4)] *իրականացնում են Արցախի*[*18)] *Հանրապետության հարկային մարմինները:*[*3)]

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

25 հունիսի 2005թ.
ք.Ստեփանակերտ
ՀՕ-206

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*3),*5)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 13-րդ հոդվածը, որը վերաբերում է առևտրի իրականացման վայրի լիցենզավորման պահանջներին հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 13.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ օրենքի 2-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի 4[1]-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում 2012 թվականի հուլիսի 1-ից[*5)]*:*

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև առևտրի իրականացման վայրի լիցենզավորման պահանջի ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առևտրի իրականացման վայրի կազմակերպման տեսակներից առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների (բացառությամբ այն շուկաների, որոնք ենթակա չեն լիցենզավորման) կազմակերպիչները պարտավոր են մինչև լիցենզիա ստանալու հայտը ներկայացնելը վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) տրամադրման պայմանագրերը համապատասխանեցնել «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3.1-րդ հոդվածի պահանջներին:

3. Լիցենզիա ստանալու համար հայտատուն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստանալու հայտին կից լիցենզավորող մարմին է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած ձևով հայտարարություն՝ առևտրի իրականացման վայրի վաճառատեղերի (այդ թվում՝ առևտրի օբյեկտների) և վաճառողների վերաբերյալ, որը պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկությունները.

1) առևտրի իրականացման վայրի կազմակերպչի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, նրանց պետական գրանցման համարը և ամսաթիվը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

2) սույն օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր վաճառատեղի տրամադրման պայմանագրի կնքման և գործողության ժամկետները, վաճառատեղի հերթական համարը և հատկացվող տարածքի մակերեսը (մ^2).

3) յուրաքանչյուր վաճառատեղում առևտրական գործունեություն իրականացնելու նպատակով կազմակերպչի հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, նրանց պետական գրանցման համարը և ամսաթիվը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն).

4) կազմակերպչի հետ պայմանագիր կնքած յուրաքանչյուր իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից օգտագործման (շահագործման) համար նախատեսվող հսկիչ-դրամարկղային մեքենայի՝ սահմանված կարգով հարկային մարմնում գրանցման քարտի համարը:

4. Սույն հոդվածի երրորդ մասում նախատեսված հայտարարությունում չի ներառվում միայն առևտրի իրականացման վայրերում գտնվող, բացառապես գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի համար նախատեսված բաց վաճառասեղանների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց համար օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրումը:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիցենզավորող մարմինը սույն հոդվածի երրորդ մասին համապատասխան ներկայացրած հայտարարության պատճենը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմին, որը լիցենզավորող մարմին է ներկայացնում տեղեկանք՝ հայտարարությունում նշված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի՝ հարկ վճարողի հաշվառման համարների և հարկային մարմնում հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման քարտի համարների համապատասխանության կամ հայտարարությունում տեղ գտած անհամապատասխանությունների մասին:

6. «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիցենզավորող մարմնի կողմից հայտատուի հայտը մերժվում է, եթե հայտին կից հայտարարությունում առկա է սույն հոդվածի հինգերորդ մասում նշված անհամապատասխանություն: Լիցենզիա ստանալու հայտարարությունում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության (հարկային մարմնի ներկայացրած տեղեկանքում նշված լինելու) դեպքում լիցենզավորող մարմինը հայտը կարող է բավարարել վերապահումով, որ լիցենզիան հայտատուին կտրվի դրանց վերացման դեպքում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*7)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 12-րդ հոդվածը, որը վերաբերում է չդրոշմավորված ապրանքային մնացորդների պահանջներին հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 12. *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :*

Սույն օրենքի 7-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2014 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց մոտ առկա չդրոշմավորված ապրանքային մնացորդները կարող են իրացվել մինչև 2014 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*8)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

2. Պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00, 3304, 3305, 3401, 3402, 2936, 3002 20 000, 3002 30 000, 3003, 3004, 3303 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքների) արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00, 3304, 3305, 3401, 3402, 2936, 3002 20 000, 3002 30 000, 3003, 3004, 3303 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքների) իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի մարտի 31-ը ներառյալ:

4. ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401, 3402, 2936, 3002 20 000, 3002 30 000, 3003, 3004, 3303 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

5. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 3304, 3305, 3401, 3402, 2936, 3002 20 000, 3002 30 000, 3003, 3004, 3303 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի *սեպտեմբերի 30-ը*[*10)] ներառյալ:

6. ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008, 2209 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

7. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա՝ ԱՏԳ ԱԱ 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006, 2007, 2008,

2209 00 ապրանքային խմբերին դասվող ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով չդրոշմավորված ապրանքների իրացումը թույլատրվում է մինչև 2016 թվականի մարտի 31-ը ներառյալ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*12)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 5-րդ հոդվածը հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

Հոդված 5. *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 1-ից:*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*16)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը, որը վերաբերվում է 15.3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածով Օրենքում լրացվող 15.3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարկման օրվանից մեկ տարի հետո :

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը [*19)]

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղվածք. սույն օրենքի 7-րդ հոդվածը, որը վերաբերվում է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերությանը, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի իրացմանը, հնարավոր չէ ներառել օրենքի հիմնական տեքստում, այդ պատճառով ներկայացվում է առանձին)

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածի գործողությունը տարածվում է 2022 թվականի հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող կամ ներմուծող հանդիսացող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն արտադրված կամ ներմուծված՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի իրացումը թույլատրվում է մինչև 2023 թվականի հունիսի 1-ը ներառյալ:

4. Անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող անձանց կողմից մինչև 2023 թվականի հունիսի 1-ը ձեռք բերված՝ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված՝ ԱՏԳ ԱԱ 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի առանց դրոշմապիտակի իրացումը թույլատրվում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը ներառյալ:

**1) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (12.12.07 ՀՕ-90) խմբագրությամբ:*

**2) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (17.09.08 ՀՕ-53-Ն) խմբագրությամբ:*

**3) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (28.10.09 ՀՕ-49-Ն) խմբագրությամբ:*

**4) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 ՀՕ-55-Ն) խմբագրությամբ:*

**5) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 ՀՕ-56-Ն) խմբագրությամբ:*

**6) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (16.12.10 ՀՕ-61-Ն) խմբագրությամբ:*

**7) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (31.10.13 ՀՕ-40-Ն) խմբագրությամբ:*

**8) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (18.09.14 ՀՕ-32-Ն) խմբագրությամբ:*

**9) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.06.15 ՀՕ-37-Ն) խմբագրությամբ:*

**10) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (30.06.15 ՀՕ-38-Ն) խմբագրությամբ:*

**11) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի (24.02.16 ՀՕ-4-Ն) խմբագրությամբ:*

**12) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (21.12.2017 ՀՕ-73-Ն) խմբագրությամբ:*

**13) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (31.10.18 ՀՕ-68-Ն) խմբագրությամբ:*

**14) «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (20.12.18 ՀՕ-89-Ն) խմբագրությամբ:*

**15) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ օրենքի (19.12.19 ՀՕ-126-Ն) խմբագրությամբ:*

**16) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (30.04.20 ՀՕ-25-Ն) խմբագրությամբ:*

**17) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ օրենքի (28.10.21 ՀՕ-107-Ն) խմբագրությամբ (Օրենքի գործողությունը տարածվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ից ծագած հարաբերությունների վրա):*

**18) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (28.04.22 ՀՕ-14-Ն) խմբագրությամբ:*

**19) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ օրենքի (28.06.23 ՀՕ-27-Ն) խմբագրությամբ:*